ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2014 թվականի N 405-Ա

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի նոյեմբերի 15-ի N 1032-Ա հրամանը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Ջրամբարների պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Խոշոր հիդեհապայթունավտանգ օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) Ձնաբքի ժամանակ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Կոմունալ-էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլանը (ջուր, գազ, կապ, տրանսպորտ, էլեկտրաենթակայան և այլն)՝ համաձայն N 5 հավելվածի,

6) Համաճարակի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը>> հաստատելու մասին N 473-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի նոյեմբերի 20
ք. Հրազդան